Անցեալ յունիսի 28-ին առաւօտեան Աբասթումանում ի Տէր հանգեաւ Նորին Կայսերական Բարձրութիւն Համայն Ռուսիոյ Թագաժառանգ

ԳԷՈՐԳԻ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԻՉԸ,

կոկորդի յանկարծակի արեանհոսութիւնից:

Հանգուցեալ Թագաժառանգ Մեծ իշխանը երիտասարդ էր և տկար, որը ստիպել էր Նորին Բարձրութեան Աբասթումանի մեղմ կլիմայում ապրելու:

Նորին Բարձրութիւնը յայտնի էր Իւր ընտիր յատկութիւններով և սիրում էր Կովկասն ու նորա բնակիչներին, ուստի և Նորա անակնկալի մահը խոր սգով պատեց ինչպէս ամբողջ Ռուսիան, այնպէս էլ Կովկասի բոլոր բնակիչներին:

Այդ մեծ վշտի առթիւ հրամայուած է Բարձրագոյն Պալատում սուգ նշանակել 3 ամիս ժամանակ:

Նորին Կայսերական Մեծութիւն Համայն Ռուսիոյ Ինքնակալ ՆԻԿՈԼԱՅ երկրորդի՝ տարւոյս յունիսի 28-ին տուած բարձրագոյն մանիֆէստով Կայսրութեան Գահաժառանգ է հրատարակուած Ն. Կ. Մեծութեան եղբայր մեծ իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչը, որ ծնուած է 1878 թուի նոյեմբերի 22-ին։